ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՕՖԵՐՏԱ
«ԹՐԻՎԱ» ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ԱՆՏԱՌԱՊԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Սույն հրապարակային օֆերտայի միջոցով «ՍՈՈՒԼ Մի» ՍՊԸ-ն, հանդես գալով որպես «ԹՐԻՎԱ» էլեկտրոնային համակարգի միջոցով անտառապատում իրականացնելու ցանկություն հայտնած անձի գործակալ, ներկայացնում է «ԹՐԻՎԱ» էլեկտրոնային համակարգի օպերատորի և «ԹՐԻՎԱ» էլեկտրոնային համակարգի միջոցով «ՀԱՅԱՆՏԱՌ» ՊՈԱԿ-ի հետ կնքվող անտառապատման աշխատանքների կատարման պայմանագրի էական պայմանները:

2. «ՍՈՈՒԼ Մի» ՍՊԸ-ն՝ որպես «ԹՐԻՎԱ» էլեկտրոնային համակարգի միջոցով անտառապատում իրականացնելու ցանկություն հայտնած անձի գործակալ, այդ անձի անունից «ՀԱՅԱՆՏԱՌ» ՊՈԱԿ-ի հետ կնքում է անտառապատման աշխատանքների կատարման պայմանագիր:

3. Անտառապատման աշխատանքների կատարման պայմանագիր կնքելիս և այդ պայմանագրի շրջանակում «ԹՐԻՎԱ» էլեկտրոնային համակարգի միջոցով անտառապատում իրականացնելու ցանկություն հայտնած անձի անունից հանդես է գալիս «ՍՈՈՒԼ Մի» ՍՊԸ-ն՝ որպես «ԹՐԻՎԱ» էլեկտրոնային համակարգի միջոցով անտառապատում իրականացնելու ցանկություն հայտնած անձի գործակալ:

4. «ԹՐԻՎԱ» էլեկտրոնային համակարգի միջոցով անտառապատում իրականացնելու ցանկություն հայտնած անձի անունից անտառապատման աշխատանքների կատարման պայմանագրեր կնքելու դիմաց «ՍՈՈՒԼ Մի» ՍՊԸ-ն անտառապատում իրականացնելու ցանկություն հայտնած անձից ստանում է վարձատրություն՝ սույն օֆերտայի պայմաններով սահմանված չափով:

5. Ակցեպտավորելով (հաստատելով) սույն հրապարակային օֆերտան՝ «ԹՐԻՎԱ» էլեկտրոնային համակարգի միջոցով անտառապատում իրականացնելու ցանկություն հայտնած անձը հաստատում է, որ ամբողջությամբ ծանոթացել է «ԹՐԻՎԱ» էլեկտրոնային համակարգի միջոցով անտառապատման աշխատանքների կատարման պայմանագրի ստորև ներկայացվող պայմաններին, «ԹՐԻՎԱ» էլեկտրոնային համակարգի օպերատորի ծառայություններից օգտվելու կանոններին ու սակագներին և ողջ ծավալով ու անվերապահորեն ընդունում է դրանք:

6. «ԹՐԻՎԱ» էլեկտրոնային համակարգի միջոցով անտառապատում իրականացնելու ցանկություն հայտնած անձին «ԹՐԻՎԱ» էլեկտրոնային համակարգում գրանցելու պահից սույն հրապարակային օֆերտան համարվում է ակցեպտավորված (հաստատված): Այդ պահից, մի կողմից, «ՀԱՅԱՆՏԱՌ» ՊՈԱԿ-ի և, մյուս կողմից, «ԹՐԻՎԱ» էլեկտրոնային համակարգի միջոցով անտառապատում իրականացնելու ցանկություն հայտնած անձի միջև կնքվում է անտառապատման աշխատանքների կատարման պայմանագիր՝ ստորև ներկայացվող պայմաններով:

«ԹՐԻՎԱ» ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ԱՆՏԱՌԱՊԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ԲԱԺԻՆ 1.
ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Սույն պայմանագրում օգտագործվող հասկացություններն ունեն հետևյալ իմաստը.

1.1. Կատարող՝ «ՀԱՅԱՆՏԱՌ» պետական ոչ առևտրային կազմակերպություն:

1.2. Օպերատոր՝ «ՍՈՈՒԼ ՄԻ» ՍՊԸ:

1.3. «ԹՐԻՎԱ» էլեկտրոնային համակարգ՝ սեփականության կամ վարձակալության իրավունքով Օպերատորին պատկանող սարքավորումների և ծրագրային ապահովումների ամբողջություն, որոնց միջոցով ստեղծված հարթակն օգտագործվում է ինտերնետ միջավայրում առցանց գործառնություններ իրականացնելու, Կատարողի ու Հաճախորդի միջև անտառապատման աշխատանքների կատարման պայմանագիր կնքելու և դրա կատարումն ապահովելու համար:

1.4. Հաճախորդ՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը, «ԹՐԻՎԱ» էլեկտրոնային համակարգի միջոցով Կատարողի հետ կնքում է անտառապատման աշխատանքների կատարման պայմանագիր՝ սույն պայմանագրի պայմանների համաձայն:

1.5. Գաղտնաբառ՝ Հաճախորդի կողմից ստեղծվող թվերի, տառերի և սիմվոլների համակցություն, որը «ԹՐԻՎԱ» էլեկտրոնային համակարգի կողմից օգտագործվում է որպես Հաճախորդի նույնականացման միջոց՝ թույլ է տալով Հաճախորդին մուտք գործել «ԹՐԻՎԱ» էլեկտրոնային համակարգի հարթակ և Կատարողի հետ կնքել անտառապատման աշխատանքների կատարման պայմանագիր:

1.6. Բջջային հավելված՝ Android կամ iOS հենքի հիման վրա մշակված հավելված, որի միջոցով հնարավոր է կատարել Հաճախորդի նույնականացում, թույլ տալ Հաճախորդին օգտվել «ԹՐԻՎԱ» էլեկտրոնային համակարգից, ինչպես նաև տեղեկատվություն փոխանակել Հաճախորդի և Օպերատորի միջև:

1.9. Պաշտոնական կայքէջ՝ «ԹՐԻՎԱ» էլեկտրոնային համակարգի ինտերնետային կայքէջ՝ «soulme.net», որի միջոցով, ի թիվս այլնի, հնարավոր է կատարել Հաճախորդի նույնականացում, թույլ տալ Հաճախորդին օգտվել «ԹՐԻՎԱ» էլեկտրոնային համակարգից, ինչպես նաև տեղեկատվություն փոխանակել Հաճախորդի և Օպերատորի միջև:

ԲԱԺԻՆ 2
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

2.1. Սույն Պայմանագրով Օպերատորը՝ որպես Հաճախորդի գործակալ, պարտավորվում է Հաճախորդի հանձնարարությամբ Հաճախորդի անունից և Հաճախորդի հաշվին կատարել իրավաբանական ու այլ գործողություններ, որոնք կապված են Հայաստանի Հանրապետության անտառային հողերի՝ Օպերատորի և Կատարողի համաձայնեցրած տեղամասերում

անտառապատման աշխատանքների կատարման և Օպերատորի միջոցով տնկված անտառների խնամքի աշխատանքների կատարման հետ:

2.2. Սույն պայմանագրից բխող իր պարտականությունների կատարման համար Օպերատորը «ԹՐԻՎԱ» էլեկտրոնային համակարգի միջոցով Հաճախորդի անունից Կատարողի հետ կնքում է անտառապատման աշխատանքների կատարման պայմանագիր հետևյալ առարկայով.

2.2.1. Հաճախորդի պատվերով անտառապատման աշխատանքների իրականացում Հայաստանի Հանրապետության անտառային հողերի՝ անտառապատման աշխատանքների կատարման համար Կատարողի և Օպերատորի կողմից համաձայնեցված տեղամասերում, ինչպես նաև՝

2.2.2. Հաճախորդի պատվերով տնկված անտառների խնամքի աշխատանքների իրականացում 5 տարի ժամկետով:

2.3. Կատարողի հետ անտառապատման աշխատանքների կատարման պայմանագրեր կնքելիս և այդ պայմանագրերի շրջանակում Օպերատորը գործում է Հաճախորդի անունից: Օպերատորի կողմից Հաճախորդի անունից Կատարողի հետ կնքված՝ անտառապատման աշխատանքների կատարման պայմանագրերից բխող իրավունքներն ու պարտականությունները ձեռք է բերում անմիջապես Հաճախորդը:

2.4. Հաճախորդը պարտավորվում է վճարել Օպերատորին Պայմանագրի 3-րդ բաժնով սահմանված չափով և պայմաններին համապատասխան, ինչպես նաև հատուցել սույն Պայմանագրի կատարման համար Օպերատորի կատարած բոլոր անհրաժեշտ և հիմնավորված ծախսերը:

2.5. Անտառապատման աշխատանքների կատարման պայմանագրի գինը որոշվում է ըստ Հաճախորդի կողմից տրված պատվերի մեջ ներառված ծառերի քանակի՝ այն հաշվարկով, որ մեկ ծառի տնկման և 5 տարվա ընթացքում մեկ ծառի խնամքի աշխատանքների իրականացման համար Կատարողին վճարվող գումարը կազմում է 1,800 (հազար ութ հարյուր) ՀՀ դրամ, իսկ Օպերատորի գործակալական վարձատրությունը մեկ ծառի դիմաց կազմում է 300 (երեք հարյուր) ՀՀ դրամ:

2.6. Հաճախորդի կողմից «ԹՐԻՎԱ» էլեկտրոնային համակարգի միջոցով Կատարողին ներկայացվող՝ անտառապատման պատվերը ներառում է հետևյալ պարտադիր պահանջները.

- տնկման ենթակա ծառերի քանակը,
- Հաճախորդի նույնականացման տվյալները,
- տնկման ենթակա ծառատեսակները և դրանց քանակները,
- անտառապատման կոնկրետ տեղամասը:

2.7. Անտառապատման պատվերը տրվում է «ԹՐԻՎԱ» էլեկտրոնային համակարգի միջոցով:

2.8. Անտառապատման պատվերը համարվում է հաստատված Կատարողի կողմից այն ստանալու պահին:

2.9. Անտառապատման պատվերի ստացման և հաստատման մասին ծանուցումը Կատարողի կողմից արվում է «ԹՐԻՎԱ» էլեկտրոնային համակարգի միջոցով:

2.10. Հաճախորդի կողմից Կատարողին ներկայացվող՝ անտառապատման պատվերը ստանալուց հետո Կատարողը ձեռնամուխ է լինում այդ պատվերով նշված անտառապատման աշխատանքների կատարմանը՝ այդ աշխատանքների իրականացման համար բարենպաստ սեզոնային, եղանակային, բնակլիմայական պայմանների ծագման առաջին իսկ պահից:

2.11. Անտառապատման պատվերը կատարելու ընթացքում որևէ հիմնավոր խոչընդոտ ծագելու դեպքում նախաձեռնվում են գրավոր և/կամ բանավոր բանակցություններ Օպերատորի և Կատարողի միջև՝ առաջացած խնդիրները համատեղ ջանքերով լուծելու համար:

2.12. Հաճախորդի պատվերով անտառապատման աշխատանքների կատարման յուրաքանչյուր փուլի ընթացքի և արդյունքների մասին Կատարողը տեղեկացնում է Օպերատորին՝ ներկայացնելով համապատասխան ապացույցներ (օրինակ՝ լուսանկար, տեսանյութ և այլն): Ընդ որում, Հաճախորդի պատվերով անտառապատման աշխատանքների կատարման յուրաքանչյուր փուլի ավարտը հաստատվում է Կատարողի կողմից տրամադրված տեղեկանքով:

2.13. Օպերատորը «ԹՐԻՎԱ» էլեկտրոնային համակարգի միջոցով Հաճախորդին տեղեկացնում է Հաճախորդի պատվերով անտառապատման աշխատանքների կատարման յուրաքանչյուր փուլի ընթացքի և արդյունքների մասին՝ հիմնվելով Կատարողի տրամադրած տեղեկանքի և ապացույցների վրա:

2.14. Կատարողը պարտավոր է ապահովել, որ Օպերատորը և Հաճախորդը, ինչպես միասին, այնպես էլ առանձին անարգել մուտք գործեն անտառապատման աշխատանքների կատարման վայր՝ հնարավորություն տալով նրանց դիտարկելու, զննելու, լուսանկարելու, տեսաձայնագրելու տվյալ տարածքը և անտառապատման աշխատանքների կատարման ընթացքն ու արդյունքները, ինչպես նաև մասնագիտական փորձաքննության ենթարկելու այն:

2.15. Կատարողը հավաստում է, որ անտառապատման աշխատանքներ կատարելիս գործում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների պահպանմամբ, ունի անտառապատման աշխատանքներ կատարելու համար անհրաժեշտ և ՀՀ օրենսդրությամբ սահմանված բոլոր թույլտվությունները և/կամ փաստաթղթերը, ամբողջ ծավալով պատասխանատվություն է կրում սույն կետով սահմանված պահանջների չպահպանման, ինչպես նաև համապատասխան թույլտվություններ և/կամ փաստաթղթեր չունենալու պատճառով առաջացած հետևանքների (ներառյալ՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից Օպերատորի և Հաճախորդի հանդեպ կիրառված միջամտող միջոցների) համար:

ԲԱԺԻՆ 3
ԳՈՐԾԱԿԱԼԱԿԱՆ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

3.1. Հաճախորդը պարտավոր է Օպերատորին վճարել վարձատրություն՝ Օպերատորի կողմից Հաճախորդի անունից կնքված՝ յուրաքանչյուր անտառապատման աշխատանքների կատարման պայմանագրի համար՝ մեկ ծառի դիմաց 300 (երեք հարյուր) ՀՀ դրամ հաշվարկով (գործակալի վարձատրություն):

3.2. Օպերատորի վարձատրությունն ու ցանկացած այլ վճարումները կատարվում են ՀՀ դրամով:

3.2.1. Պայմանագրի 3.1 կետով սահմանված վարձատրության վճարումը տեղի է ունենում հետևյալ կերպ. ստանալով Հաճախորդից փոխանցված գումարը՝ Օպերատորը Հաճախորդի անունից կնքված՝ անտառապատման աշխատանքների կատարման պայմանագրի արժեքից նվազեցնում է իր ձեռնարկատիրական շահույթը՝ սույն Պայմանագրի 3.1 կետում նշված վարձատրությունը, և մնացած գումարը փոխանցում է Կատարողին:

ԲԱԺԻՆ 4
ՕԳՏԱՏԵՐԵՐԻ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՈՒՄԸ, ՀԱՇՎԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ՀԱՇՎՈՎ ԿԱՏԱՐՎՈՂ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

4.1. Օպերատորի կողմից այլ բան սահմանված չլինելու դեպքում՝ Հաճախորդը կարող է ունենալ միայն մեկ գործող գրանցում Համակարգում: Եթե Օպերատորը պարզում է, որ միևնույն անձի համար Համակարգում բացվել են մեկից ավելի հաշիվներ, ապա Օպերատորը կարող է դադարեցնել համապատասխան պայմանագրերից որևէ մեկը կամ բոլորը:

4.2. Օգտատիրոջ նույնականացումը կատարվում է հետևյալ կերպ.

4.2.1. Բջջային հավելվածը ներբեռնելուց և գործարկելուց հետո, ինչպես նաև պաշտոնական կայք մուտք գործելիս Հաճախորդը ինքնաշխատ կերպով ստանում է առցանց նույնականացվելու հրահանգը:

4.2.2. Հաճախորդի նույնականացման համար անձը պարտավոր է բոլոր պահանջվող տվյալները ներբեռնել կամ մուտքագրել Համակարգ:

4.2.3. Նույնականացման համար բոլոր անհրաժեշտ տվյալները Համակարգ ներբեռնելուց կամ մուտքագրելուց և ստուգվելուց հետո Հաճախորդը կարող է համարվել նույնականացված:

4.3. Յուրաքանչյուր էլեկտրոնային փոստի հասցե կամ բջջային հեռախոսահամար կարող է օգտագործվել միայն մեկ օգտահաշիվ օգտագործելու համար:

4.4. Էլեկտրոնային եղանակով Հաճախորդին նույնականացնելու և օգտահաշվի կառավարումը թույլատրելու համար Հաճախորդին կարող են տրամադրվել համարներ, կոդեր, գաղտնաբառեր կամ այլ վավերապայմաններ:

ԲԱԺԻՆ 5
«ԹՐԻՎԱ» ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ ԿԱՏԱՐՎՈՂ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5.1. Օպերատորը «ԹՐԻՎԱ» էլեկտրոնային համակարգի միջոցով ապահովում է Հաճախորդի կողմից անտառապատման աշխատանքների կատարման պայմանագրի գնի վճարման կատարումը:

5.2. Անտառապատման աշխատանքների կատարման պայմանագրի գինը վճարվում է անկանխիկ եղանակով՝ Օպերատորի բանկային հաշվին:

5.3. Հաճախորդը աշխատանքների կատարման պայմանագրի գինը վճարում է «ԹՐԻՎԱ» էլեկտրոնային համակարգի միջոցով, որից հետո Հաճախորդը ստանում է վճարման կատարումը և անտառապատման աշխատանքների կատարման պայմանագրի կնքումը հավաստող ծանուցում:

5.4. Եթե վճարումը չի հաջողվում, ապա Հաճախորդը ստանում է վճարման կատարումը և անտառապատման աշխատանքների կատարման պայմանագրի կնքումը չեղարկվելու վերաբերյալ ծանուցում, որտեղ նշվում են վճարման կատարումը չհաջողվելու պատճառները:

5.5. Գումարը վճարելուց հետո Հաճախորդը իրավունք չունի չեղարկելու գումարի փոխանցման գործարքը:

5.6. Հաճախորդի կողմից տրված անտառապատման պատվերը և վճարման կատարումը կարող են մերժվել Օպերատորի կողմից այն դեպքերում, եթե՝

5.6.1. դրանց կատարման արդյունքում կարող է խախտվել օրենսդրությունը կամ Օպերատորի կողմից սահմանված պահանջները (այդ թվում՝ խախտվել Օպերատորի կամ երրորդ անձի իրավունքները կամ օրինական շահերը),

5.6.2. դրանց կատարումը հնարավոր չէ Օպերատորից անկախ պատճառով,

5.6.3. օրենսդրությամբ կամ սույն Պայմանագրով սահմանված այլ դեպքերում:

5.7. «ԹՐԻՎԱ» էլեկտրոնային համակարգի միջոցով կատարված բոլոր գործառնություններն արտացոլվում են Համակարգում, ինչպես նաև Պաշտոնական կայքէջում:

5.8. Հաճախորդի կողմից սխալմամբ մուտքագրված գումարները վերադարձման ենթակա չեն, բացառությամբ այն դեպքի, եթե գործառնության կատարումը չի հաջողվել:

5.9. Հաճախորդի և Կատարողի միջև անտառապատման աշխատանքների կատարման պայմանագիրը համարվում է կնքված անտառապատման տվյալ պատվերի գինը կազմող գումարը Հաճախորդի կողմից ամբողջությամբ վճարվելու պահից:

ԲԱԺԻՆ 6
ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

6.1. Հաճախորդն իրավունք ունի՝

6.1.1. օգտվել «ԹՐԻՎԱ» էլեկտրոնային համակարգից՝ սույն պայմանագրի պայմաններին համապատասխան,

6.1.2. ստանալ տեղեկատվություն անտառապատման աշխատանքների կատարման գնի և այլ պայմանների մասին,

6.1.3. ստանալ տեղեկատվություն իր կողմից կատարված բոլոր գործառնությունների վերաբերյալ,

6.1.4. Օպերատորից պահանջել վերացնել Պայմանագրի կատարման ընթացքում առաջացած թերությունները,

6.1.5. ցանկացած ժամանակ ստուգել Օպերատորի և Կատարողի կողմից Պայմանագրի կատարման ընթացքը՝ առանց միջամտելու վերջիններիս գործունեությանը:

6.2. Հաճախորդը պարտավոր է՝

6.2.1. վճարել Օպերատորին՝ սույն Պայմանագրով սահմանված չափով և կարգով,

6.2.2. Չխոչընդոտել Օպերատորի կողմից սույն Պայմանագրի կատարմանը:

6.2.3. անհրաժեշտության դեպքում և/կամ Օպերատորի պահանջով վերջինիս տրամադրել գրավոր կամ բանավոր տեղեկատվություն, փաստաթղթեր, առանց որոնց անհնար կլինի

Օպերատորի կողմից սույն Պայմանագրի կատարումը: Ընդ որում, Պայմանագրի սույն ենթակետով սահմանված տեղեկատվության և/կամ փաստաթղթերի իսկության և պատշաճության պատասխանատվությունը կրում է Հաճախորդը, ով կրում է դրանց անպատշաճության և/կամ անարժանահավատության բացասական հետևանքների ռիսկը,

6.2.4. անմիջապես տեղեկացնել Օպերատորին նրան տրամադրված գրավոր կամ բանավոր տեղեկատվության, փաստաթղթերի հետ կապված փոփոխությունների վերաբերյալ, առանց որոնց անհնար կլինի Օպերատորի կողմից սույն Պայմանագրի կատարումը,

6.2.5. հատուցել Օպերատորի կրած ծախսերը,

6.2.6. Օպերատորին տրամադրել ճշգրիտ տեղեկատվություն և վավեր փաստաթղթեր, ինչպես նաև անհապաղ տեղեկացնել Օպերատորին այդ տեղեկատվության փոփոխման դեպքում,

6.2.7. «ԹՐԻՎԱ» էլեկտրոնային համակարգից օգտվել անձամբ և բացառապես օրինական նպատակների համար: Հաճախորդը պատասխանատվություն է կրում երրորդ անձանց իր օգտահաշվի տվյալների տրամադրման և, հետևաբար, երրորդ անձանց կողմից իր օգտահաշվի օգտագործմամբ կատարված գործարքների համար,

6.2.8. ապահովել օգտահաշվի կառավարման վավերապայմանների գաղտնիությունը և պաշտպանվածությունը չարտոնված օգտագործումից,

6.2.9. ձեռնպահ մնալ Օպերատորի պաշտոնական կայքը կամ Բջջային հավելվածի կառավարման համար օգտագործվող այլ միջոցները սույն պայմանագրով չնախատեսված որևէ եղանակով օգտագործելուց,

6.2.10. պարբերաբար ստուգել Օպերատորի պաշտոնական կայքում կամ Բջջային հավելվածում զետեղված՝ իրեն վերաբերվող տեղեկատվությունը,

6.2.11. անմիջապես հայտնել Օպերատորին հայտնաբերված բոլոր անհամապատասխանությունների և արտասովոր հանգամանքների մասին և, մասնավորապես, Օպերատորի պաշտոնական կայքի կամ Բջջային հավելվածի որևէ ծանուցման կամ կարգադրության սխալ լինելու կամ արտացոլված չլինելու դեպքում,

6.2.12. Օգտահաշվի կառավարման համար օգտագործվող բջջային հեռախոսահամարի կամ էլեկտրոնային փաստի հասցեի փոփոխման, կորստի կամ այլ կերպով Հաճախորդի տիրապետումից դուրս գալու դեպքում՝ անհապաղ տեղեկացնել Օպերատորին,

6.2.13. իր նույնականացման համար հիմք ծառայած փաստաթղթերի փոփոխության դեպքում անհապաղ տեղեկացնել այդ մասին Օպերատորին՝ տրամադրելով փոփոխված փաստաթղթի կրկնօրինակը: Սույն կետով սահմանված պարտավորությունը պատշաճ կարգով չկատարելուց կամ պատշաճ կարգով չկատարելուց բխող բոլոր ռիսկերը կրում է Հաճախորդը:

6.3. Օպերատորն իրավունք ունի՝

6.3.1. մերժել որևէ գործարք և կասեցնել բոլոր գործարքները կամ դրանց որևէ մասը՝ սխալ, խախտում կամ կեղծիք հայտնաբերելու դեպքում, ինչպես նաև այն դեպքերում, երբ Օպերատորի մոտ կասկած է հարուցում գործարքի օրինականությունը կամ օգտահաշվի կառավարման վավերապայմանների պաշտպանվածությունը չարտոնված օգտագործումից,

6.3.2. արգելափակել օգտահաշվի կառավարման վավերապայմանները կամ պահանջել Հաճախորդից փոփոխել դրանք, եթե Հաշվի կառավարման վավերապայմանների

պաշտպանվածությունը չարտոնված օգտագործումից Օպերատորի մոտ կասկած է հարուցում կամ առկա է հավաստի փաստաթուղթ, որ դրանք պատկանում են այլ անձի,

6.3.3. Հաճախորդի կողմից այնպիսի գործողություններ թույլ տրվելու դեպքում, որոնց արդյունքում կարող է վնաս պատճառվել Օպերատորին կամ երրորդ անձանց, մերժել Հաճախորդի կողմից հայցվող գործառնությունների կատարումը,

6.3.4. միակողմանի դադարեցնել իր ծառայությունների մատուցումը,

6.3.5. ձեռք բերել, մշակել և պահպանել տեղեկատվություն օգտահաշվի կառավարման համար օգտագործվող տեխնիկական միջոցների մասին,

6.3.6. ելնելով օրենսդրության փոփոխությունից կամ տեխնիկական անհրաժեշտությունից՝ փոփոխել օգտահաշվի նույնացուցիչներին ներկայացվող պահանջները կամ այլ պայմանները՝ նախօրոք այդ մասին ծանուցելով Հաճախորդին,

6.3.7. Հաճախորդի և նրան նույնականացնող փաստաթղթերի տվյալների պարբերական մոնիթորինգի ընթացքում հայտնաբերված վավերականության ժամկետը լրացած փաստաթղթերով Հաճախորդին տեղեկացնել փոփոխված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության մասին: Օպերատորի բանավոր կամ գրավոր ծանուցումը ստանալու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում սույն կետով սահմանված պահանջը չկատարելու կամ պատշաճ կարգով չկատարելու դեպքում Օպերատորն իրավասու է միակողմանիորեն փոփոխել Օգտատիրոջ կարգավիճակը՝ ըստ վերջինիս կողմից բավարարող պայմանների:

6.3.8. գործարքների կատարման համար ներդնել լրացուցիչ պաշտպանական գործիքներ:

6.4. Օպերատորը պարտավոր է՝

6.4.1. գործադրել անհրաժեշտ միջոցներ առկա տեխնիկական հնարավորությունների սահմաններում «ԹՐԻՎԱ» էլեկտրոնային համակարգից օգտվելու հնարավորությունը և իր ծառայությունների պատշաճ որակն ապահովելու համար,

6.4.2. Հաճախորդին տրամադրել տեղեկատվություն Բջջային հավելվածով կամ Պաշտոնական կայքէջով կատարված գործառնությունների վերաբերյալ,

6.4.3. Միջոցներ ձեռնարկել «ԹՐԻՎԱ» էլեկտրոնային համակարգի միջոցով փոխանակվող տեղեկատվության գաղտնիության ապահովման ուղղությամբ,

6.4.4. Հաճախորդին տեղեկացնել բոլոր այն հանգամանքների առաջացման, փոփոխման կամ վերացման մասին, որոնք էական նշանակություն ունեն սույն պայմանագրի կատարման համար,

6.4.5. կատարել օրենքով կամ սույն պայմանագրով սահմանված այլ պարտավորությունները:

ԲԱԺԻՆ 7
ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7.1. Օգտահաշվի կառավարման վավերապայմանների կորստի դեպքում, ինչպես նաև դրանց երրորդ անձանց հայտնի դառնալու կասկածի դեպքում, Հաճախորդը պարտավոր է Օպերատորի կողմից սահմանված կարգով անհապաղ տեղեկացնել Օպերատորին: Մինչև վավերապայմանների արգելափակումը կամ փոփոխումը Հաճախորդը կրում է դրանց չարտոնված

օգտագործման անբարենպաստ հետևանքների ռիսկերը, այդ թվում՝ կրում է պատասխանատվություն Օպերատորին պատճառված վնասների համար:

7.2. Յուրաքանչյուր կողմ պատասխանատվություն է կրում Պայմանագրի կատարման ընթացքում մյուս կողմին պատճառված իրական վնասների համար: Կողմերը հրաժարվում են և զերծ են պահում միմյանց անուղղակի վնասների և բաց թողնված օգուտների հատուցման պահանջներից: Օպերատորը պատասխանատվություն չի կրում ոչ իր մեղքով առաջացած խափանումների, սխալների և իրավախախտ գործողությունների համար, ինչպես նաև սույն պայմանագրով նախատեսված հիմքերով (այդ թվում՝ Համակարգի տեխնիկական սպասարկման աշխատանքների կատարման ժամանակ) գործարքները կասեցնելու կամ դադարեցնելու ցանկացած հետևանքների համար:

7.3. Հաճախորդը կրում է բոլոր ռիսկերը, որոնք կարող են առաջանալ Օպերատորի կողմից սահմանված պայմանները խախտելու, ինչպես նաև վերջինիս խորհուրդներին և ցուցումներին չհետևելու արդյունքում:

ԲԱԺԻՆ 8
ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ, ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄ

8.1. Կողմերն ապահովում են սույն պայմանագրի շրջանակներում միմյանց միջև փոխանակվող տեղեկատվության պաշտպանվածությունը:

8.2. Օպերատորն ապահովում է Հաճախորդի անձնական տվյալների, կատարված գործարքների և այլ տեղեկատվության գաղտնիությունը: Տեղեկատվությունը կարող է բացահայտվել Օպերատորի կողմից բացառապես այն դեպքերում և այն ծավալով, որը պահանջվում է օրենքով, անհրաժեշտ է գործարքների կնքման համար, կամ անհրաժեշտ է Օպերատորի կամ Կատարողի խախտված իրավունքի օրինական (այդ թվում՝ դատական) պաշտպանության համար: Բոլոր այլ դեպքերում նման տեղեկատվությունը կարող է բացահայտվել միայն Հաճախորդի համաձայնությամբ կամ կարգադրությամբ:

8.3. Պայմանագրի նպատակների համար գաղտնի չի համարվում այն տեղեկատվությունը, որը կարող էր ստացվել այլ եղանակով՝ առանց գաղտնիության պահանջների խախտման:

8.4. Օգտահաշվով կատարված գործառնություններին վերաբերող տեղեկատվությունը և փաստաթղթերը Օպերատորը պահպանում է համապատասխան գործառնության կատարման ամսաթվից հաշված առնվազն 1 տարի ժամկետով:

8.5. Բջջային հեռախոսի միջոցով Բջջային հավելվածը կառավարելու հնարավորությունից օգտվելու դեպքում, նման ցանկությունը հայտնելու փաստով համարվում է, որ Հաճախորդը լիազորել է Օպերատորին դիմել բջջային կապի համապատասխան օպերատորին կամ այլ անձանց և ստանալ հաստատում առ այն, որ համապատասխան բջջային հեռախոսահամարը հատկացված է Հաճախորդին, ինչպես նաև տեղեկացվել հեռախոսահամարի անջատման, փոփոխման, այլ անձի հատկացման կամ դրա սպասարկման պայմանագրի լուծման դեպքերում: Հաճախորդի կողմից բջջային հեռախոսահամարի օգտագործման կասեցման կամ դադարեցման մասին երրորդ անձից ստացված տեղեկատվության հիման վրա Օպերատորն իրավունք ունի, սակայն պարտավոր չէ

արգելել բջջային հեռախոսահամարի օգտագործմամբ Բջջային հավելվածի կառավարման հնարավորությունը: Օպերատորն իրավունք ունի Հաճախորդից պահանջել գրավոր ապացույց առ այն, որ բջջային հեռախոսահամարը հատկացված է իրեն:

8.6. Հաճախորդը կրում է իր կողմից Օպերատորին տրամադրված տեղեկատվության ոչ ճշգրիտ լինելու բացասական հետևանքների ռիսկերը:

ԲԱԺԻՆ 9
ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

9.1. Սույն պայմանագրով այլ բան նախատեսված չլինելու դեպքում սույն պայմանագրի շրջանակում բոլոր ծանուցումները կատարվում են էլեկտրոնային եղանակով՝ «ԹՐԻՎԱ» էլեկտրոնային համակարգի կամ էլեկտրոնային փաստի հասցեի միջոցով:

9.2. Հաճախորդը համարվում է պատշաճ ծանուցված սույն պայմանագրի շրջանակում էլեկտրոնային եղանակով՝ «ԹՐԻՎԱ» էլեկտրոնային համակարգի կամ էլեկտրոնային փաստի հասցեի միջոցով ուղարկված բոլոր հաղորդագրությունների, տվյալների, տեղեկությունների և այլ նյութերի մասին՝ անկախ դրանք Հաճախորդին փաստացի հասանելի դառնալու կամ չդառնալու հանգամանքից: Սույն պայմանագրի շրջանակներում էլեկտրոնային եղանակով՝ «ԹՐԻՎԱ» էլեկտրոնային համակարգի միջոցով ուղարկված բոլոր ծանուցումները համարվում են ստացված Հաճախորդի կողմից՝ անկախ Հաճախորդի կողմից դրանք փաստացի չդիտելու կամ չընթերցելու հանգամանքից:

ԲԱԺԻՆ 10
ԿԻՐԱՌՎՈՂ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

10.1. Սույն պայմանագիրը կարգավորվում և մեկնաբանվում է Հայաստանի Հանրապետության իրավունքով:

ԲԱԺԻՆ 11
ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

11.1. Հաճախորդը պարտավոր է ստուգել օգտահաշվով կատարված գործառնությունները և որևէ անհամապատասխանություն հայտնաբերելու դեպքում Օպերատորին ծանուցել դրանց մասին:

11.2. Եթե Հաճախորդը չի հայտնել Օպերատորին որևէ անհամապատասխանության մասին, ապա օգտահաշվով կատարված գործառնությունները համարվում են Հաճախորդի կողմից անվերապահորեն հաստատված և ընդունված, և Հաճախորդը այդ գործառնություններին վերաբերող որևէ հետագա պահանջներ և առարկություններ չի կարող ներկայացնել Օպերատորին:

11.3. Դժգոհություններ կամ առաջարկություններ ունենալու դեպքում Հաճախորդը կարող է դիմել Օպերատորին:

11.4. Օպերատորը պարտավոր է արձագանքել ստացված բողոքներին և առաջարկություններին՝ ողջամիտ ժամկետներում՝ պահպանելով օրենսդրությամբ սահմանված պահանջները:

11.5. Հաճախորդի գրավոր բողոքներին պետք է տրվի գրավոր պատասխան:

11.6. Կողմերը պետք է ձգտեն լուծել ծագած վեճերը բարյացակամորեն՝ բանակցությունների և խորհրդակցությունների միջոցով:

11.7. Վեճը լուծելու մասին փոխադարձ համաձայնության բացակայության դեպքում այն լուծվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԲԱԺԻՆ 12
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԼՈՒԾՈՒՄԸ

12.1. Օպերատորը կարող է սեփական հայեցողությամբ միակողմանի կարգով փոփոխել սույն պայմանագրի պայմանները՝ այդ մասին առնվազն 3 (երեք) օր առաջ ծանուցելով Հաճախորդին:

12.2. Փոփոխությունների հետ համաձայն չլինելու դեպքում՝ Հաճախորդը լուծում է պայմանագիրը՝ այդ մասին անմիջապես ծանուցելով Օպերատորին:

12.3. Փոփոխությունների ուժի մեջ մտնելուց հետո որևէ գործառնություն կատարելու դեպքում փոփոխությունները համարվում են Հաճախորդի կողմից անվերապահորեն ընդունված:

12.4. Սույն պայմանագիրը կարող է լուծվել դրանով նախատեսված դեպքերում:

12.5. Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում «ԹՐԻՎԱ» էլեկտրոնային համակարգի միջոցով կնքվելու և անտառապատման աշխատանքների կատարման գինը կազմող գումարը Օպերատորին փոխանցվելու պահից և գործում է հինգ տարի ժամկետով: